



Հայաստան, 0025, Երևան, Կոռյունի փ. 2, հեռ. 060621238, 2-38, [ss@ysmu.am](mailto:ss@ysmu.am)

**ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26-Ի ԹԻՎ  
11 ՀԵՌԱԿԱ ՆԻՍՏԻ ՈՐՈՇՈՒՄ**

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1407-Ն որոշմամբ հաստատված «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) կանոնադրությամբ՝

**Գիտական խորհուրդը որոշում է.**

1. Հաստատել «Հիբրիդային ձևաչափով ուսումնական գործընթացի և ուսանողների գիտելիքների ատեստավորման մասին» կանոնակարգը (կցվում է) (20-08-11-01):

2. Հաստատել «Կովիդ-19 համավարակի ժամանակ բժշկական համալսարանում հակահամաճարակային միջոցառումների կազմակերպման մեթոդական ուղեցույցը» (կցվում է) (20-08-11-02):

3. Հաստատել մասնագիտական և շարունակական կրթության կլինիկական օրդինատորայի ուսումնական ծրագրերը՝ «Կլինիկական լաբորատոր ախտորոշում» և «Լաբորատոր գենետիկա» մասնագիտություններով (կցվում են) (20-08-11-03):

4. Հաստատել «Բժիշկների և բուժքույրերի կատարելագործման դասընթացների ուսումնական պլան-ծրագրերը» (կցվում են) (20-08-11-04):

5. Հաստատել «Անվանական կրթաթոշակների մասին» կանոնակարգի» 9-րդ կետի 3-րդ ենթակետի լրացումը և ենթակետի վերջում ավելացնել հետևյալ նախադասությունը.



«Մույն ենթակետով նախատեսված երաշխավորությունը չի պահանջվում՝  
նեկտորարարի որոշմամբ՝ համավարակի կամ այլ հիմնավորված պարճառ  
առաջանալու դեպքերում» (20-08-11-05):

6. Համալսարանի Գիտական խորհրդի 2019 թվականի մայիսի 29-ի թիվ 7  
նիստի և 2020 թվականի հունիսի 10-ի թիվ 9 նիստի որոշումներով հաստատված  
կլինիկական օրդինատուրայի ստոմատոլոգիական մասնագիտությունների  
ուսումնական ծրագրերին համապատասխան, սկսած 2020 թվականից,  
Համալսարանում «Ընտանեկան (ընդհանուր) ստոմատոլոգիա» մասնագիտությամբ  
մեկուկես տարվա ուսումնառությունն ավարտած բժիշկ-մասնագետների հետագա  
ուսուցումը կազմակերպել՝

ա) մեկուկես տարի տևողությամբ՝ «Թերապևտիկ ստոմատոլոգիա»,  
«Օրթոպեդիկ ստոմատոլոգիա», «Վիրաբուժական ստոմատոլոգիա» մասնագիտությ-  
յուններով դիմորդների համար:

բ) երկու տարի տևողությամբ՝ «Օրթոդոնտիա» մասնագիտությամբ դիմորդ-  
ների համար:

Մնացած բոլոր դեպքերում բժիշկ-մասնագետների՝ երկրորդ մասնագիտությ-  
յամբ հետագա ուսուցումը կազմակերպել վերը նշված մասնագիտությունների համար  
3 տարի տևողությամբ հաստատված ուսումնական ծրագրերով՝ վերանայելով ուսման  
ժամկետները՝ հետբուհական մասնագիտական ուսուցումը կազմակերպելու համար  
ստեղծված մշտական հանձնաժողովի կողմից (20-08-11-06):

7. Հաշվի առնելով համաճարակային իրավիճակը օտարերկրյա ուսանողների  
Հայաստանի Հանրապետություն ժամանելու դժվարություններով պայմանավորված,  
ուսանողների բացակայությունների լրացումները կազմակերպել հեռավար, առցանց  
ձևաչափով՝ սեպտեմբերի 15-ից մինչև հոկտեմբերի 1-ը ընկած  
ժամանակահատվածում, անհրաժեշտության դեպքում ժամանակահատվածը  
երկարացնել մինչև հոկտեմբերի 15-ը (20-08-11-07):

8. Մույն նիստով ընդունված որոշումների կատարման հսկողությունը հանձնարարել  
ԵՊԲՀ ռեկտոր, պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանին:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ



Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Տ.Գ.ԱՎԱԳՅԱՆ